ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ ՄԱՀՎԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սույն թվականի փետրվարի 2-ին և 3-ին ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի մահվան 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, որ կազմակերպել էին ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը և Հայաստանի գրողների միությունը։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ինստիտուտի տնօրեն, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը։ Հանգամանորեն ներկայացնելով Պուշկինի ստեղծագործության պատմական և արդիական նշանակությունը ռուս և համաշխարհային մշակույթի համապատկերում՝ նա մասնավորապես նշեց. «Մեկ ու կես դարի հեռավորությունից այսօր շատ ավելի հստակ է երևում Պուշկինի ոչ միայն համաշխարհային, այլև համաշխարհային մեծությունը։ Պուշկինը եղել և մնում է ռուսական գեղարվեստական խոսքի բարձրագույն տիպար, կենսական ճշմարտության և բանաստեղծական կատարելության, պարզության և խորության, ստեղծագործական ներդաշնակության անգերազանց օրինակ։ Պուշկինը միշտ մեր առջևում է։ Մենք անընդհատ մերձենում ենք նրան, բայց երբեք չենք սպառում նրա իմաստության և գեղեցկության հմայքը։ Պուշկինյան առողջ և ողջախոհ պոեզիան, մարդասիրական պայծառ ներշնչանքները և բարոյագեղագիտական իդեալը այսօր մեզ օդի պես անհրաժեշտ են։ Պուշկինը ոչ միայն հանրագումար էր, այլև հետագա զարգացման հզոր խթան։ Նրա ստեղծագործական փորձն ու ավանդույթները ուղղակի կամ միջնորդավորված ձևով կանխորոշել են ազգային գեղարվեստի ամբողջ հետագա ճակատագիրը։ Նա դրեց այն բոլոր հիմքերը, որոնք նախապատրաստեցին XIX—XX դդ. ռուս մեծ գրականության համաշխարհային ճանաչումն ու նշանակությունը։ Մենք այսօր էլ կարող ենք կրկնել Բելինսկու այն խոսքը, թե գրել Պուշկինի մասին՝ նշանակում է գրել ամբողջ ռուս գրականության մասին՝ ակունքներից մինչև մեր օրերը»։

«Ժամանակակից պուշկինագիտության պրոբլեմները» թեմայով զեկուցեց բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Գուլակյանը։ Պուշկինի ստեղծագործության ուսումնասիրության ներկա շրջափուլը ընթանում է մի կողմից նախորդ շրջափուլերի գրականագիտության նվաճումների, կուտակած փորձի, ավանդների յուրացման և դրանց նորովի իմաստավորման, մյուս կողմից գրականագիտական նոր դիտանկյունների լույսի ներքո գրողի գեղարվեստական համակարգի վերլուծության ուղիով։ Վերլուծական նոր մեթոդների ու եղանակների կիրառությունը նոր շրջափուլում բացահայտում է մեծ գրողի ստեղծագործության նորանոր շերտեր, որոնք մինչ այդ աննկատ էին մնացել ավանդական գրականագիտության մեջ։

«Հայկական անդրադարձումները Պուշկինի ստեղծագործության մեջ» զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պ. Հակոբյանը։ Գիտնականը ներկայացրեց այն փաստերը, որոնք վկայում են մեծ բանաստեղծի և հայազգի գործիչների զանազան հարաբերությունների ու կապերի մասին և վերջիններիս խաղացած ուղղակի կամ անուղղակի դերը գրողի ստեղծագործական կյանքում։ Իր ստեղծագործական կյանքի հանապարհին և հարավային Ռուսիայում ու Կովկասում թափառումների տարիներին Պուշկինը հանդիպել է բազմաթիվ հայերի, որոնցից ստացած տպավորությունները արտացոլված են նրա արձակ ու չափածո երկերի և հնօրյա հուշագրությունների մեջ։ Պուշկինը հիացմունքով է խոսել Ռարգմանուհի Աննա Արամելիքյանցի մասին։

1820 թ. Պուշկինը այցելում է Կովկաս, իսկ 1829 թ.՝ Հայաստան։ Առաջին այցելության արդյունքն են լինում գրողի ստեղծագործական կյանքում ռոմանտիզմի շրջանը նշանավորող ստեղծագործությունները, իսկ Հայաստանում ճամփորդելուց հետո գրողը իր տպավորությունները գրի է առնում «Ճանապարհորդություն դեպի Արզրում» ուղեգրական երկում, որտեղ բազմաթիվ վկայություններ կան հայերի և Հայաստանի մասին։ Ահա այս ուղևորությունների հետ-

նվիրված գանազան խնդիրներին էին նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Ղ. Այվազյանի («Պուշկինի առաջին այցելությունը Նովկաս») և բանասիրական գիտությունների թեկնածու Յու. Եղանյանի («Հայաստանը Պուշկինի «Հանապարհորդություն դեպի Արզրում» գրքում») զեկուցումները։

«Ժողովրդայնության պրոբլեմը Պուշկինի և Թումանյանի ըմբռնմամբ» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Եղիազարյանը։ Դեռևս 1910-ական թթ.,— նշեց նա,—Թումանյանին համեմատում էին Պուշկինի հետ, և այդ համեմատությունը միանգամայն հիմնավոր էր։ Նրանցից յուրաքանչյուրը իր ազգային գրականության մեջ գրավում էր մի այնպիսի տեղ, որ այլևս անկրկնելի էր մնալու գրականության զարգացման հետագա ընթացքում։ Պուշկինին և Թումանյանին կապող գլխավոր ընդհանրությունը ժողովրդականության բնույթն էր։ Պուշկինը և Թումանյանը անգերազանցելի խորությամբ արտահայտեցին իրենց ժողովուրդների ոգին ու աշխարհազգացողությունը։

«Բանաստեղծները Պուշկինի զոհվելու մասին» թեմայով հանդես եկավ բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Գրիգորյանը։ Մեծ գրողի ողբերգական մահը մշտապես եղել է ռուս բանաստեղծների սնեռուն ուշադրության կենտրոնում, նրանք տարբեր առիթներով անդրադարձել են դրան՝ իրենց դիտանկյունից իմաստավորելով այն։ Պուշկինի մահը բանաստեղծների համար ավելի շատ խորհրդանշական իմաստ է ձեռք բերել, այն դիտվել է առաջավոր անհատի և պատմական ժամանակաշրջանի բախման, գրողի դժվարին ճակատագրի և ճշմարտության հաղթանակի խորհրդանիշ։ Մ. Լերմոնտովը, Բ. Պաստեռնակը, Ա. Ախմատովան, Մ. Ցվետաևան, Ե. Եվտուշենկոն և այլոք յուրովի մշակելով այդ թեման՝ Պուշկինի ողբերգական վախճանի մեջ տեսել են բարոյական կայուն և ճշմարիտ դիրքորոշման մի այնպիսի չափանիշ, որ պարտադիր է ամեն մի իսկական բանաստեղծի համար։

«Ավետիք Իսահակյանը և Պուշկինը. դասական ավանդույթի զարգացումը» թեմայով զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Ավ. Ղասաբակյանը։ Իսահակյանի ստեղծագործական կյանքում Պուշկինը համաշխարհային պոեզիայի ավանդների մարմնացում էր։ Իսահակյանին առավել հարազատ էին Պուշկինի վաղ շրջանի ռոմանտիկական, «բայրոնյան» ոգով գրված ստեղծագործությունները։ Իսահակյանին հարազատ էին Պուշկինի խոհափիլիսոփայական ստեղծագործությունները, որոնց մեջ արտահայտված են կյանքի անցողիկության, կյանքի ու մահվան գոտեմարտի հավերժական խնդիրները։ Պուշկինը հայտնի էր որպես աշխարհի ազատաշունչ ժողովուրդների մեծ բարեկամ։ Նա ներբողել է հույների, սլավոնների, սերբերի, բուլղարների ազատագրական պայքարը օսմանյան լծի դեմ։ Իսահակյանը այդ ստեղծագործությունները դիտել է որպես ուղերձներ՝ ուղղված հայ ժողովրդին։

Պուշկինի քնարի հանդեպ Եղիշե Չարենցի վերաբերմունքի մասին զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Չարենցը։ Նա նշեց, որ Չարենցը ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում ռուս բանաստեղծը՝ «պոետներից ամենապայծառն ու վսեմը», եղել է նրա սնեռուն ուշադրության կենտրոնում։ Պուշկինը Չարենցի համար չափանիշ էր «արվեստի կատարելության»։ Սովետական գրականության ձևավորման հենց սկզբից Չարենցը գտնում էր, որ «Պուշկին ստեղծագործողի ու մտածողի ժառանգությունը յուրացնելով միայն մեր պոեզիան կարող է դուրս գալ ստեղծագործական-ֆորմալիստական կարգի որոնումների փակուղուց և թեակոխել իսկական խորհրդային գրականության, սոցիալիստական ռեալիզմի գրականության լայն ճանապարհ։ Առանց Պուշկինի այդ հարցը չի կարելի լուծել»։ Պուշկինի պոեզիան Չարենցի համար ոչ միայն ընօրինակ էր իսկական արվեստի, այլև ներշնչանքի աղբյուր։ Այս առումով, բանաստեղծական ձևերի և գաղափարների բազմաթիվ մերձեցման եզրեր ունեն երկու մեծ գրողները։ Իր ստեղծագործության վերջին շրջանում (1935—1937) Չարենցը հարյուր տարի անց նույն հոգեբանական-ստեղծագործական առեղծվածների առաջ է կանգնում՝ հայտնվելով մարդկային նույնանման փոխհարաբերությունների ոլորտում, ինչ Պուշկինը իր կյանքի վերջին շրջանում։ Չարենցը զուգահեռում է իր և Պուշկինի մարդկային ճակատագրերը որպես անարդարության զոհերի, բայց և՝ ճշմարտության նահատակների։

«Պուշկինի ռեալիզմի բնութագրման շուրջը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների դոկտոր Ն. Ալեքսանյանը։

Նստաշրջանի վերջում Պուշկինից կատարած իր նոր թարգմանությունները կարդաց բանասիրական գիտությունների դոկտոր Լ. Ասմարյանը։

Գ. Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ